ԷԴՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990-2001 թթ.

Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրներից ի սկզբանե Հայաստանի համար ամենակարևորը Ռուսաստանի Դաշնությունն էր: Երկու ժողովուրդների դարավոր փոխհարաբերությունների առումով օրինաչափ էր, որ Հայաստանի անկախացումը չընթացավ ի վնաս հայ-ռուսական բարեկամության: Անկախացումից հետո Հայաստանը չշեղվեց երկու ժողովուրդների՝ բազում փորձությունների բովով անցած եղբայրական փոխհարաբերություններում ձևավորված մոտեցումների ռազմավարությունից, շարունակելով միջպետական հարաբերությյունների զարգացմանն ու ամրապնդմանը ուղղված իր գործունեությունը, առանցքային տեղ հատկացնելով այդ ուղղությամբ ծագած բոլոր հարցերին: Դրանով էր պայմանավորված նաև այն, որ երկու երկրների միջև թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ հարաբերություններում գրեթե չեղան մեծ ու փոքր խնդիրներ, որոնց շուրջ փոխհամաձայնություն չկայացվեր: Փաստերը վկայում են, որ ՀՀ անկախացման հենց սկզբից Ռուսաստանը կարևորագույն տեղ զբաղեցրեց Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, և դա խորապես օրինաչափ էր, քանի որ արտացոլում էր այն պետական միտումներն ու ավանդները, որոնք գոյություն են ունեցել երկու երկրների և ժողովուրդների միջև: Փաստորեն անկախացումից հետո երկու ժողովուրդների փոխհարաբերություններում առաջին անգամ ողջ թափով զարգացում ստացան փոխադարձ շահերի հաշվառման, լիակատար հավասարության վրա հիմնված համագործակցության ձևերը: 1990-ականների երկրորդ կեսից Ռուսաստանի արտաքին քաղաքականության կովկասյան ուղղվածության նոր ռազմավարությունը մեծապես համապատասխանեց հայ ժողովրդի արմատական շահերին:

Բնականաբար մեկ հոդվածի մեջ անհնար է ամբողջովին ներկայացնել և վերլուծել ռազմավարական դաշնակիցների՝ ՀՀ և ՌԴ միջև կնքված բոլոր պայմանագրերը, համաձայնագրերը, արձանագրությունները ու այլ փաստաթղթերը միաժամանակ, տալով յուրաքանչյուրի կենսագործման ընթացքը: Սակայն թվում է անհրաժեշտ է անդրադառնալ քննարկվող ժամանակահատվածում հայ-ռուսական քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բնագավառներում համագործակցության առավել էական պահերին, որոնք բացահայտում են երկու անկախ երկրների փոխհարաբերությունների հիմնական սկզբունքներն ու էությունը: Փաստորեն դժվար է չընդունել, որ հենց Ռուսաստանի հետ իրավահավասարության սկզբունքներով Հայաստանի կնքած պայմանագրերը հանդիսանալով ազգային ինքնիշխանության դրսևորում, միաժամանակ ավելի էին ամրապնդում ՀՀ հենց այդ պետական ինքնիշխանությունը: Այդ բնույթի հայ-ռուսական ամենաառաջին կարևորագույն փաստաթղթերից էր 1991թ. դեկտեմբերի 29-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Ֆեդերացիայի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության» համաձայնագիրը[1]: Ըստ էության համընդհանուր բնույթի միջպետական փաստաթղթում արծարծվել էին ինչպես սոցիալ-տնտեսական ու քաղա-

1 «Հայաստանի Հանրապետություն», 15 հունվարի 1992 թ.:

քական, այնպես էլ ռազմական նշանակության հիմնահարցեր: Թերևս բացառիկ քաղաքական հնչեղություն ուներ փաստաթղթի հենց առաջին հոդվածը, որում մասնավորապես ասվում էր, որ Ռուսաստանն ու Հայաստանը այդուհետ իրենց հարաբերությունները պետք է զարգացնեն բացառապես որպես «... բարեկամական պետություններ: Նրանք պարտավորվում են անշեղորեն առաջնորդվել միմյանց պետական ինքնիշխանության և անկախության փոխադարձ հարգանքի, իրավահավասարության և մեկը մյուսի ներքին գործերին չմիջամտելու, ուժ կամ ուժի սպառնալիք, ներառյալ ճնշման տնտեսական և այլ միջոցները, չգործադրելու, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները հարգելու, պարտավորությունները բարեխղճորեն կատարելու սկզբունքներով և միջազգային իրավունքի համընդհանուր այլ չափանիշներով»[2]: Կողմերը պայմանավորվում էին առավել սերտորեն համագործակցել հատկապես երկու երկրների ազգային անվտանգության ոլորտում, որի արդյունավետ կենսագործման նպատակով նախատեսվում էր հետագայում առանձին պայմանավորվածություններ կայացնել մի կողմի զինված ուժերի խմբաքանակի մյուսի տարածքում գտնվելու հարցերի վերաբերյալ: Բացի այդ համաձայնագրի առաջին հոդվածով սահմանվում էր կողմերից մեկի, պետական անվտանգությանը հնարավոր սպառնալիքի պարագայում փաստաթուղթը ստորագրած մյուս կողմի անհապաղ օգնության հնարավորությունը:

Ըստ համաձայնագրի երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները կառուցվելու էին միմյանց առավել բարենպաստ պայմաններ տրամադրելու հիմքի վրա: Միջպետական համաձայնագրում բացի համագործակցության վերը հիշատակված ուղղություններից նախատեսվում էր նաև սերտ փոխներգործություն ծավալել մշակույթի, առողջապահության, բնապահպանության, գիտության, տեխնիկայի և այլ բնագավառներում: Հայաստանի Հանրապետության համար չափազանց կարևոր էր նաև համաձայնագրի 2-րդ հոդվածում տեղ գտած այն ձևակերպումը, ըստ որի կողմերը պարտավորվում էին ջանքեր գործադրել փաստաթուղթը ստորագրած երկու երկրներից յուրաքանչյուրի շահերը շոշափող տարածքային վեճերի կարգավորմանն աջակցելու ուղղությամբ[3] և այլն:

Միայն 1992 թվականին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Ֆեդերացիայի միջև բացառապես առկա իրականության թելադրանքով կնքվեցին տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական և այլ բնագավառների վերաբերող բազում պայմանագրեր, որոնք հետագայում ընկան հայ-ռուսական ռազմավարական դաշնակցության հիմքում: Թվարկենք այդ պայմանագրերից մի քանի, մեր կարծիքով, առավել կարևորները՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 1993 թվականին առևտրատնտեսական համագործակցության մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև առևտրական ներկայացուցչությունների փոխադարձ հիմնադրման մասին», «Ռուբլին, որպես օրինական վճարամիջոց պահպանած Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միասնական դրամական համակարգի և համաձայնեց-

2 Անդ:
3 «Հայաստանի Հանրապետություն», 15 հունվարի 1992 թ.:

ված դրամավարկային ու վալյուտային քաղաքականության մասին», «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ազատ առևտրի վերաբերյալ» համաձայնագրերը[4] և այլն:

Երկու երկրների միջև այդ շրջանում կայացված համաձայնություններից տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման առումով թերևս առավել կարևորվում է 1992 թ. սեպտեմբերին ստորագրված տնտեսական կառուցվածքների ստեղծման վերաբերյալ միջպետական համաձայնագիրը[5], որով կողմերը հնարավորություն էին ստանում անկախ տարածքից և արդյունաբերության ճյուղից ստեղծել տարբեր կազմակերպաիրավական ձևերի տնտեսական կառուցվածքներ և առաջին հերթին տեխնոլոգիական կապվածության սկզբունքի վրա կառուցված բաժնետիրական ընկերություններ: Ավելորդ է հիշեցնել, որ հենց այդ և հետագայում կայացված մի քանի համանման համաձայնությունների արդյունքում ապահովվեց Ռուսաստանի տնտեսական գործոնի ներկայությունը Հայաստանում:

Տարբեր մակարդակներով կնքված միջպետական պայմանագրերի ու համաձայնագրերը համաձայնեցված ժամկետներում վավերացնելու, փոխադարձ պարտավորություններն ու պայմանավորվածությունները կյանքի կոչելու նպատակով 1993 թվականին ստորագրվեց հայ-ռուսական միջխորհրդարանական համագործակցության համաձայնագիր[6]:

Սերտ համագործակցության խոսուն վկայությունն էր նաև այն, որ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման միայն առաջին հինգ տարիների ընթացքում ՀՀ և ՌԴ միջև կնքվել էին 100-ից ավելի միջպետական, միջկառավարական ու միջգերատեսչական ամենատարբեր բնույթի պայմանագրեր[7]:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերություններին առավել դինամիզմ և արդյունավետություն տալու անհրաժեշտությունից ելնելով ՀՀ ԳԽ 1994 թվականի հունիսի 22-ի որոշմամբ փոխադարձաբար ընդունելի որոշ վերապահումներով վավերացվեց տակավին 1992 թվականի օգոստոսին Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին» պայմանագիրը, որով փաստորեն որոշակիորեն սահմանվելով ՀՀ-ում տեղակայված ՌԴ զինուժի գույքային ու տարածքային հարցերի լուծումը ըստ էության օրինականացվում էր հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների այդ բնագավառը[8]: Այդ փաստաթղթով ըստ էության հիմք դրվեց Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ռազմական փոխգործակցության իրավական դաշտի ձևավորմանը:

Հայաստան-Ռուսաստան ռազմական համագործակցության ոլորտում լրջագույն քայլ էր 1995 թվականի մարտի 16-ին Մոսկվայում երկու երկրների ղեկավարների՝ Լ. Տեր-Պետրոսյանի և Բ. Ելցինի ստորագրած «Հայաստանի Հանրապետությունում ռուսական ռազ-

4 «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», N 7(1035), 15 ապրիլի 1993 թ., անդ, N 8 (1036), 15 ապրիլի 1993 թ., էջ 44, «Հայաստանի Հանրապետություն», 7 հոկտեմբերի, 8 հոկտեմբերի 1992 թ.:

5 «Հայաստանի Հանրապետություն», 7 հոկտեմբերի 1992 թ.:

6 «Հայաստանի Հանրապետություն», 8 հունիսի, 1993 թ., 16 հունիսի 1994 թ.:

7 «Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի 1997 թ.:

8 «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», N 12(1064), 30 հունիսի 1993 թ., էջ 13-14, Հայաստանի Հանրապետություն, 6 հուլիսի 1994 թ.:

մական հենակետի մասին»[9] պայմանագիրը: 25 տարի ժամկետով կնքված այդ պայմանագրի նպատակը ԱՊՀ արտաքին սահմանների հուսալի պաշտպանության համակարգի ձևավորումն էր: Բնականաբար ռազմական հենակետի տեղակայման պայմանագրին հաջորդեցին մեկ տասնյակից ավելի հարակից համաձայնագրեր, որոնք կոչված էին կարգավորելու Հայաստանում Ռուսաստանի զինվորականների սոցիալ-տնտեսական, կենցաղային և նմանատիպ բնույթի այլ հարցեր[10]:

1996 թ. նոյեմբերին ՀՀ Սահմանադրական դատարանը քննարկելով Հայաստանում Ռուսաստանյան ռազմակայանի մասին կնքված պայմանագիրը որոշեց, որ այդ փաստաթղթի վավերացումը չէր հակասում Հայաստանի սահմանադրությանը[11]: Ելնելով այդ որոշումից ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմինը 1997 թվականի ապրիլին իր հերթին, կարևորելով հայ-ռուսական ռազմապաշտպանական այդ համաձայնագրի լիակատար համապատասխանությունը Հայաստանի և ողջ հայ ժողովրդի կենսական շահերին, վավերացրեց այն[12]: Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի, ինչպես և բազմաթիվ այլ կարևորագույն միջպետական փաստաթղթերի վավերացման բուն գործընթացները խոսուն վկայություններ են այն բանի, որ անկախության հաստատումից հետո, բոլոր դեպքերում, Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում գերիշխողը պետական ինքնիշխանության սկզբունքն էր:

Ազգային ինքնիշխանության ապահովման սկզբունքը խստիվ պահպանվում էր ոչ միայն միջպետական բնույթի համաձայնագրերի վավերացման ընթացակարգերում, այլև ՀՀ իշխանությունների կողմից հետևողականորեն արվում էր ամեն ինչ, որպեսզի այն չխաթարվեր կայացված համաձայնությունների կիրարկման արդյունքում: Այսպես, ՀՀ և ՌԴ միջև 1992թ. սեպտեմբերի 30-ին կնքված պայմանագրի համաձայն Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության պետական սահմանների պահպանությունը ապահովող ռուսական սահմանապահ «Արմենիա» զորախումբը[13] ըստ 1994 թվականին երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրի կիսով չափ համալրվում էր Հայաստանի քաղաքացիներով[14]:

Հայաստանի պետական ինքնիշխանության շահերի պահպանման նպատակն էր հետապնդում նաև 1998 թվականին ՀՀ և ՌԴ միջև կնքված, Հայաստանի տարածքում Ռուսաստանի զինված ուժերի ռազմահանգրվանից դուրս ռուսաստանցի զինվորականների կողմից զենքի գործադրման կարգի մասին համաձայնագիրը, որը օրենսդրորեն բավական խիստ շրջանակների մեջ էր դնում խաղաղ պայմաններում ՀՀ տարածքում տեղակայված ռուսական զորամասերի զինծառայողների կողմից մարտական զենքի կիրառման հնարավորությունները[15]: Թվում է արդեն բերված և համանման բազմաթիվ այլ փաստերը միանգամայն որոշակիորեն վկայում են, որ ինչպես հայ-ռուսական միջպետական հարա-

9 «Հայաստանի Հանրապետություն», 17 մարտի 1995 թ.:

10 «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», N 21-22(111-1122), նոյեմբերի 1996թ., էջ 35-44:

11 Տես անդ, էջ 34-35:

12 «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 10, 8 մայիսի 1997 թ., էջ 11:

13 Տես «Հայաստանի Հանրապետություն», 9 սեպտեմբերի 1993 թ.:

14 «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտի 1994 թ., 2 ապրիլի 1997 թ.:

15 «Հայաստանի Հանրապետություն», 22 հուլիսի 1998 թ.:

բերությունների մյուս ոլորտներում, այնպես էլ ռազմատեխնիկական փոխգործունեության բնագավառում հայկական կողմի վարած հետևողական քաղաքականության, ինչպես նաև Ռուսաստանի իշխանությունների հիմնահարցին ցուցաբերած խոր ըմբռնողական վերաբերմունքի արդյունքում մշտապես պահպանվել են Հայաստանի անկախության արմատական շահերը:

Փաստերը անհերքելիորեն վկայում են, որ Հայաստանը ԱՊՀ շրջանակներում կայացված ռազմապաշտպանական բնույթի բոլոր հիմնական ծրագրերի հիմնադիրներից մեկն էր առանց բացառության և հայ-ռուսական ռազմաքաղաքական սերտ համագործակցության նախաձեռնողը: Եւ ամենևին պատահական չէր, որ 1996 թվականի մայիսին ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի Երևան կատարած աշխատանքային այցի ընթացքում ևս մեկ անգամ, ամենայն որոշակիությամբ շեշտվեց, որ Հայաստանը Ռուսաստանի ռազմական համագործակցության ոլորտում ինտեգրացման տեսակետից ԱՊՀ երկրների թվում առաջատարն էր[16]:

Ռազմական ոլորտում հայ-ռուսական համագործակցության ամրապնդման և հետագա զարգացման կայուն արգասիքներից էր 1995 թվականի մարտին Արմավիրում անցկացված հայ-ռուսական առաջին համատեղ տակտիկական զորավարժությունը[17]: Հաջորդ առավել մեծամասշտաբ հայ-ռուսական համատեղ մարտավարական վարժությունները տեղի ունեցան 1996 թվականի սեպտեմբերին, որոնց մասնակցում էին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի տարբեր զորատեսակների ստորաբաժանումների շուրջ 4 հազար զինծառայողներ[18]: Հետագայում ռազմական համագործակցության այդ եղանակը ևս, ինչպես հայ-ռուսական փոխգործունեության մեջ, այնպես էլ ԱՊՀ ՀԱԿ շրջանակներում, պարբերաբար շարունակվեց և իր զարգացումը ունեցավ[19]: Հենց քննարկվող ժամանակահատվածից սկիզբ առան նաև ՌԴ և ՀՀ պաշտպանության նախարարությունների ղեկավար անձնակազմի պարբերական աշխատանքային խորհրդակցությունները[20]: Հայաստանի և Ռուսաստանի միջև ինչպես ռազմատեխնիկական, այնպես էլ քաղաքական, տնտեսական, հումանիտար ոլորտներում համագործակցության բնագավառում պատմական նշանակություն ունեցավ 1997թ. օգոստոսի 29-ին երկրների նախագահների կողմից Մոսկվայում ստորագրված երկու պետությունների կենսական շահերին ավելի քան համապատասխանող «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը», ինչպես նաև «Ռուս-հայկական համատեղ հռչակագիրը»[21]: Ըստ էության կնքված պայմանագիրը երկու պետությունների միջև հարաբերություններում արդեն իսկ առկա իրողության իրավաբանական հավաստումն էր: «ՌԴ և ՀՀ միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրը, որը

16 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 մայիսի 1996 թ.:

17 Անդ, 31 մարտի 1995 թ.:

18 Անդ, 20 սեպտեմբերի 1996 թ.:

19 Անդ, 26 սեպտեմբերի 1998 թ.: 23, 24 ապրիլի, 2 սեպտեմբերի, 1999 թ., 21 մարտի 2000 թ.:

20 Անդ, 3 մայիսի 1996 թ.:

21 «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 4 (37), 24 փետրվարի 1998 թ., էջ 26, «Հայաստանի Հանրապետություն», 30 օգոստոսի 1997 թ.:

շատ չանցած իր ընդգրկուն բնույթի համար իրավամբ որակվեց որպես մեծ պայմանագիր, Ռուսաստանի և Հայաստանի միջև նախորդ շրջանում ձեռք բերված ռազմավարական գործընկերությունը բարձրացրեց դաշնակցային հարաբերությունների մակարդակի: Այդ իրողությունը առավել որոշակիությամբ ներկայացրված էր «Ռուս-հայկական համատեղ հռչակագրում», որտեղ մասնավորապես արձանագրված էր երկու պետությունների շահերի լայն զուգադիպման իրողությունը քաղաքական, ռազմական-ռազմավարական, տնտեսական և այլ բնագավառներում, ինչպես նաև համապարփակ և տարածաշրջանային հիմնախնդիրների նկատմամբ մոտեցումների ընդհանրությունը: Քաղաքական բացառիկ հնչեղության այդ փաստաթղթում հատուկ շեշտված էր երկու պետությունների դիրքորոշումների կատարյալ զուգադիպումն ու մերձությունը հասարակության զարգացման հանգուցային ու միջազգային հարցերում և այդ հիմքի վրա արտաքին քաղաքականության բնագավառում, այդուհետ էլ, սերտորեն փոխգործակցելու երկուստեք ձգտումը[22] և այլն: Պայմանագրի ոգու առումով չափազանց խորհրդանշական էր փաստաթղթի ստորագրման հենց հաջորդ օրը Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայի կենտրոնում, հայտնի Նիկիտյան դարպասների հարևանությամբ գտնվող պուրակում հայ-ռուսական դարավոր բարեկամությանը նվիրված քրիստոնեական հավատը խորհրդանշող սուրբ խաչի վրա խոնարհված, հայ և ռուս ժողովուրդները մարմնավորող գլուխ գլխի տված և միաձուլված երկու կանանց պատկերող վեհաշուք և բազմախորհուրդ հուշարձանի բացումը[23]: Եվ չնայած այն հանգամանքին, որ մինչև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին պայմանագրի ստորագրումն էլ հայ-ռուսական ռազմական համագործակցությունը ընթանում էր օպերատիվ ու արդյունավետ (մինչև 1996 թվականի կեսերը այդ բնագավառում երկու երկրների միջև կնքվել էր 18 կարևորագույն բնույթի պայմանագիր)[24], սակայն այնուամենայնիվ հայ-ռուսական մեծ պայմանագրի ընդունումը մի յուրօրինակ խթան հանդիսացավ երկկողմ հարաբերությունների հետագա ավելի զարգացման համար, որը առավել մեծ թափով ծավալվեց հատկապես Հայաստանում 1998 թվականին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո: Ռազմական բնագավառում այն դրսևորվեց նախ և առաջ 1998 թվականի սկզբին երկու երկրների միջև «Զինվորական կադրերի պատրաստման բնագավառում համագործակցության զարգացման մասին» միջպետական համաձայնագրի ստորագրմամբ[25], որի արդյունքում Ռուսաստանի ռազմական ուսումնական հաստատություններում ուսանելու հնարավորություն ստացան բազմաթիվ հայաստանցի երիտասարդներ, որոնք ստանալով ռազմական համապատասխան կրթություն ծառայության էին անցնում ՀՀ զինված ուժերում: Այդ համաձայնագրով ՀՀ բանակի շատ սպաներ իրենց հետագա ուսումնառությունն էին շարունակում ՌԴ բարձրագույն ռազմական ակադեմիաներում:

Ռազմատեխնիկական բնագավառում հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում, որպես նոր փուլ սկսվեց 1999 թվամկանի ընթացքում Գյումրիի ռուսական 102-րդ ռազմակայանում հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային Ս-300Վ

22 Տես անդ:

23 Տես անդ:

24 Տես «Հայաստանի Հանրապետություն», 3 մայիսի 1996 թ.:

25 Տես «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 3 (101), 28 փետրվարի 2000 թ., էջ 45:

գերժամանակակից համակարգի տեղակայմամբ[26], Հայաստանի օդային տրածքում մարտական հերթապահություն իրականացնող ռուսական ավիացիոն խումբը ժամանակակից «ՄԻԳ-29» տիպի կործանիչներով համալրմամբ[27], ՀՀ ՀՕՊ-ի եւ ՌԴ ռազմաօդային ուժերի համատեղ մարտական հերթապահության սահմանմամբ[28] եւ այլն: Բնականաբար ռազմատեխնիկական համագործակցության խորացմանն ուղղված վերոհիշյալ քայլերը լիովին համապատասխանում էին նաեւ Ռուսաստանի տարածաշրջանային շահերին: Բավական է նշել, որ ՀՀ սահմանից ոչ այնքան հեռու Թուրքիայի Ինջիրլիկ բնակավայրի մոտ գտնվող ՆԱՏՕ-ի ռազմակայանում տեղակայված էին մեծ քանակությամբ թեւավոր հրթիռներ, ավելի քան 50 ռազմական կործանիչներ, մեծ քանակությամբ հետախուզական օդուժ եւ այլն, որոնք պարբերաբար օդային հետախուզություն էին իրականացնում ԱՊՀ հարավային սահմաններում, հաճախ էլ նույնիսկ թափանցելով համագործակցության անդամ այդ շրջանի հանրապետությունների, այդ թվում եւ Հայաստանի տարածքներ[29]:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում որակապես նոր մակարդակ էր նույն՝ 1999 թ. նոյեմբերին հաստատված 2000 թվականին երկու երկրների ռազմական գերատեսչությունների համագործակցության ծրագիրը[30]: Հիշեցնենք, որ երկու երկրների ռազմական գերատեսչությունների համատեղ գործունեության ամենամյա ծրագրերը մշակվում էին սկսած 1996 թվականից[31], սակայն 2000 թվականին նախատեսվող համագործակցությունը իր ծավալային եւ որակական հատկանիշներով էապես գերազանցում էր ՌԴ եւ ՀՀ պաշտպանության նա- խարարությունների նախորդ բոլոր տարիների փոխգործունեության մասշտաբները: 2000 թվականի գարնանը, տակավին 1996 թ. սեպտեմբերին ՀՀ եւ ՌԴ կառավարությունների միջեւ կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի զորամասերի տեղաբաշխման եւ գործունեության համար հողամասերի փոխանցման եւ օգտագործման կարգի մասին» համաձայնագրի եւ 1997 թ. մեծ պայմանագրի համաձայն իրականացվեց ռուսաստանյան ռազմակայանին նրա զբաղեցրած հողամասերի եւ անշարժ գույքի անհատույց փոխանցումը[32]: Միայն համեմատության համար նշենք, որ Ադրբեջանը իր տարածքում գտնվող ՌԴ զինված ուժերին պատկանող «Գաբալա» հրթիռային հարձակման նախազգուշացման կայանը Ռուսաստանին շահագործման տալու համար 1997 թվականին երկու երկրների միջեւ կայացված համաձայնությամբ ՌԴ-ից ամսական ստանում էր մոտ 20-30 մլն ԱՄՆ դոլար[33]: Իսկ 1999 թվականին Ադրբեջանական իշխանությունները կտրականորեն հրաժարվում էին որեւէ իրավական լուծում տալու «Գաբալայի» հետագա կարգավիճակի հարցին՝ Ռուսաստանից պահանջելով կայանի շահագործման ընթացքում կուտակված մոտ 110 մլն դոլար պարտքը: Ադրբեջանական կողմը լրացուցիչ կերպով պահանջում էր նաեւ կայանում աշխատող ռուսական սպաներին եւ նրանց ընտանիքներին ուղղված սննդամթերքով բարձված յուրաքանչյուր

26 Տես «Հայաստանի Հանրապետություն», 19, 22 հունվարի, 23 փետրվարի 1999 թ.:

27 Անդ, 24 հունիսի, 23 հոկտեմբերի 1999 թ.:

28 Անդ, 27 մարտի. 14, 16, 23 ապրիլի 1999 թ.:

29 «Հայաստանի Հանրապետություն», 23 փետրվարի 1999 թ.:

30 Անդ, 24 նոյեմբերի 1999 թ.:

31 Անդ, 3 մայիսի 1996 թ.:

32 Անդ, 2 մարտի 2000 թ.:

33 Տես «Հայաստանի Հանրապետություն», 15 օգոստոսի 1997 թ.:

ինքնաթիռի ժամանման թույլտվության համար 3 հազ. դոլար եւ 120 հազ. ռուբլի[34]: Վերը շարադրվածը մեկ անգամ եւս ամենայն որոշակիությամբ ապացուցում է 20-րդ դարավերջին ձեւավորված հայ-ռուսական երկու ժողովուրդների արմատական շահերից բխող դաշինքի անշահախնդիր էությունը:

Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմական համագործակցության առավել սերտացմանն էին նպատակամղված 2000 թվականի մարտին ստորագրված ՀՀ ռազմական ավիացիայի, ՀՕՊ ուժերի եւ Հայաստանում տեղակայված ՌԴ ռազմակայանի ուժերի միջեւ ՀՀ պետական սահմանների անձեռնմխելիության ապահովման ուղղությամբ փոխգործունեությանը վերաբերող միջպետական եւ միջկառավարական մի շարք պայմանագրեր[35], որոնք էական դերակատարություն ունեցան հայ-ռուսական ռազմական համագործակցության խորացման գործում: Այսպես, ձեռք բերված պայմանավորվածությունների համապատասխան 2001թ. մայիսի սկզբից Ռուսաստանի եւ Հայաստանի հակաօդային պաշտպանության զորամիավորումները ՀՀ օդային սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով անցան համատեղ մարտական հերթապահության[36] եւ այլն:

Մինչեւ 2001 թվականի աշուն հայ-ռուսական ռազմական համագործակցության միջպետական իրավական դաշտը ներառում էր երկու երկրների միջեւ կնքված մոտ 40 համաձայնագիր, որոնց թիվը գնալով արագորեն աճում էր: Այսպես միայն 2001 թ. սեպտեմբերին ՌԴ պաշտպանության նախարար Ս. Իվանովի այդ տարում արդեն Հայաստան կատարած թվով չորրորդ պաշտոնական այցի ընթացքում, ստորագրեցին հայ-ռուսական ռազմական հետագա համագործակցությանն առնչվող 7 ընդգրկուն փաստաթուղթ, որոնք վերաբերում էին ՌԴ-ից Հայաստան գործուղված ռազմական խորհրդականների եւ մասնագետների կարգավիճակի, զորամասերի անշարժ օբյեկտների հանձնման եւ այլ հարցերի[37]:

Անկախացումից հետո հայ-ռուսական հարաբերություններում ամենակարեւոր ձեռքբերումներից մեկն էլ գիտության եւ կրթության ասպարեզում կապերի պահպանումն ու հետագա խորացումն էր: Դա գլխավորապես պայմանավորված էր այդ բնագավառում եւս երկու երկրների իշխանությունների եւ հասարակությունների ծավալած հետեւողական ու նպատակասլաց գործունեությամբ: Գիտակրթական բնագավառի հաջողությունները եւս պայմանավորված էին միջկառավարական համապատասխան պայմանավորվածություններով: Դրանց մեջ թերեւս ամենահատկանշականներից էր 1993 թվականին Մոսկվայում երկու երկրների գիտությունների ազգային ակադեմիաների միջեւ կնքված գիտական համագործակցության մասին պայմանագիրը[38], որով փաստորեն սկզբնավորվեց գիտական հաստատություններում իրականացվող հիմնարար եւ որոնողական հետազոտությունների համատեղ իրականացումը, երկու երկրների ժողովրդական տնտեսության եւ մշակույթի համար կարեւոր նշանակություն ունեցող գիտական, գիտատեխնիկական եւ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների մշակումը, համատեղ գիտական կոլեկտիվների, փորձարարական եւ արտադրական բազաների կազմակերպումը, գիտնականներին գիտական ինֆորմա-

34 «Հայաստանի Հանրապետություն», 23 փետրվարի 1999 թ.:

35 Անդ, 21 մարտի 2000 թ.:

36 Անդ, 5 մայիսի 2001 թ.:

37 «Հայաստանի Հանրապետություն», 14 սեպտեմբերի 2001 թ.:

38 Անդ, 17 հունիսի 1994 թ.:

ցիայով ապահովումը, գիտահետազոտական աշխատանքների եւ նախագծերի համատեղ փորձաքննության անցկացումը: Մեկ տասնյակ հոդվածներից բաղկացած այդ արժեքավոր փաստաթղթով երկու երկրների գիտական շրջանակների համագործակցության ոլորտում նոր թափ ստացավ գիտական կադրերի որակավորման եւ ատեստավորման բնագավառում միմյանց աջակցությունը, համատեղ գիտաժողովների կազմակերպումն ու անցկացումը եւ այլն: Նույն՝ 1994 թվականին երկկողմ պայմանագրով ավանդական կապերի նորացում արձանագրվեց գիտամանկավարժական երկու խոշոր կենտրոնների՝ Երեւանի եւ Մոսկվայի պետական համալսարանների միջեւ[39]: Գիտության եւ մշակույթի բնագավառում ՀՀ եւ ՌԴ համագործակցության նոր էջ բացվեց երկու երկրների միջեւ 1995թ. նոյեմբերին «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ մշակույթի, գիտության ու կրթության բնագավառներում համագործակցության մասին» Երեւանում ստորագրված համաձայնագիրը[40]: Հիշեցնենք, որ մինչ այդ պայմանագրի կայացումն էլ ՀՀ եւ ՌԴ միջեւ սերտ համագործակցություն կար գիտամշակութային բնագավառում, որը հիմնականում իրականացվում էր ԱՊՀ շրջանակներում կայացված համաձայնությունների հիման վրա[41]: Գիտամշակութային բնագավառների հետագա ինտեգրման առումով չափազանց կարեւոր էր 2001 թվականին ՀՀ եւ ՌԴ միջեւ Երեւանում կնքված կրթության, գիտական աստիճանների եւ կոչումների փոխճանաչման վերաբերյալ համաձայնագիրը[42] եւ այլն: Հումանիտար բնագավառում համագործակցության ուղղությամբ ձեռնարկված լուրջ միջոցառումներից էր տակավին 1994 թվականին Երեւանում կնքված ՀՀ-ում եւ ՌԴ-ում բնակվող համապատասխանաբար Ռուսաստանի եւ Հայաստանի քաղաքացիների աշխատանքային գործունեության եւ սոցիալական պաշտպանության մասին համաձայնագիրը[43]: Հայկական կողմի համար այդ փաստաթուղթը կարեւորվում էր հատկապես այն պատճառով, որ նույն 1994 թվականի տվյալներով միայն Հարավային Ռուսաստանում բնակվում էր ավելի քան 2 մլն հայ[44]:

Երկու երկրների միջպետական հարաբերությունների առումով բավականին արդյունավետ 1994 թվականին ստորագրվեց եւս մեկ նշանակալի փաստաթուղթ՝ կարեւորելով Հայաստանի եւ Ռուսաստանի ժողովուրդների միջեւ բարեկամության, փոխըմբռնման եւ համագործակցության ավանդական հարաբերությունների զարգացման եւ ամրապնդման անհրաժեշտությունը, ընդունելով երկու երկրների միջեւ միջխորհրդարանական համագործակցության կարեւորությունը բարեկամական եւ փոխշահավետ կապերի զարգացման համար կնքվեց «Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի եւ Ռուսաստանյան Դաշնության դաշնային ժողովի միջեւ միջխորհրդարանական համագործակցության մասին» համաձայնագիրը[45]: Այդ փաստաթղթի համաձայն ձեւավորված մշտապես գործող միջխորհրդարանական հանձնաժողովը զգալի աշխատանք ծավալեց ՀՀ եւ ՌԴ միջեւ պե-

39 «Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի 1997 թ.:

40 «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր»,N 10(1110), 31 մայիսի 1996 թ., էջ 65:

41 «Հայաստանի Հանրապետություն», 18 փետրվարի, 19 մարտի:

42 Անդ 18 սեպտեմբերի 2001 թ.:

43 «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», N 7(1097), 15 նոյեմբերի 1995 թ., էջ 55:

44 «Հայաստանի Հանրապետություն», 15 հուլիսի 1994 թ.:

45 «Հայաստանի Հանրապետություն», 16 հունիսի 1994 թ.:

տական հարաբերությունների հետագա զարգացման, համագործակցության բոլոր ոլորտներում կապերի ավելի ամրապնդման ուղղությամբ[46] եւ այլն: Գլխավորապես հենց միջխորհրդարանական հարաբերությունների սերտացման արդյունքում էր, որ 1995 թվականի ապրիլին Ռուսաստանի Պետդուման ընդունեց հայ ժողովրդի ցեղասպանությունը դատապարտելու մասին պատմական հայտարարությունը: Ռուսաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի ղեկավարությունը, արտահայտելով պատգամավորների ճնշող մեծամասնության տեսակետը, հայտարարությունը իրավամբ որակեց, որպես Ռուսաստանի պետության մարդասիրական ավանդույթների վերածնունդ[47]:

Հայաստանի եւ Ռուսաստանի բարձրագույն օրենսդիր մարմինների փոխգործողությունները ծավալվել էին ոչ միայն երկկողմ, այլեւ տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում՝ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովում, ԵԱՀԿ-ում, ՄԾՏՀ խորհրդարանական վեհաժողովում եւ այլն:

Ի շահ երկու երկրների ժողովուրդների հայ-ռուսական միջխորհրդարանական փոխգործունեության բացառիկ արդյունավետության վկայությունն էր 1998 թվականին ՀՀ եւ ՌԴ բարձրագույն օրենսդիր մարմինների միջեւ համագործակցության նոր համաձայնագրի ստորագրումը[48]: Կասկածից վեր է, որ երկու երկրների միջեւ ազատականության ոգով համանիստար խնդիրների լուծման լավագույն օրինակներից է նաեւ ՌԴ եւ ՀՀ կառավարությունների միջեւ 1997 թվականին կնքված կամավոր վերաբնակեցման գործընթացի կարգավորման մասին համաձայնագիրը[49]: Այդ համաձայնագրի գործունեությամբ ապահովվում էր երկու երկրների քաղաքացիների բնակության վայրի ազատ ընտրության իրավունքը, որոշակիորեն սահմանափակվում միջպետական միգրացիայի գործընթացի տարերայնությունը, պետական ամենաբարձր մակարդակով ապահովվում էին վերաբնակիչների ունեցվածքային իրավունքները: Այդ հարցերում նրանք օրենսդրորեն ստանում էին տեղաբնակներին հավասար իրավասություններ՝ կարող էին տեղափոխված երկրում օգտվել ունեցվածքի եւ բնակարանի սեփականաշնորհման եւ ազատ փնօրինման իրավունքից: Համաձայնագրի կարեւորագույն պայմաններից մեկով էլ տեղափոխման ընթացքում վերաբնակիչների ունեցվածքը ընդհանրապես ազատվում էր մաքսային հարկերից եւ այլն:

Նմանատիպ խնդիրների լուծումը ապահովվում էր նաեւ նույն թվականին ՀՀ եւ ՌԴ միջեւ կնքված «Ռուսաստանի Դաշնության տարածքում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների եւ Հայաստանում մշտապես բնակություն հաստատած ՌԴ քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» համաձայնագիրը[50]:

Գաղտնիք չէ, որ հայ եւ ռուս ժողովուրդները խորքային իմաստով քաղաքակրթական եւ մշակութային նույն արժեքներն են դավանում: Դա պայմանավորված է ողջ պատմական զարգացման նախորդ ընթացքով, իսկ հատկապես խորհրդային շրջանում համաշխարհային չափանիշներով կրթական ամենաբարձր մակարդակի հասած Հայաստանում մշակվել էր հոգեհարազատության մի առանձնակի զգացում ռուսական մշակույթի եւ հայ-

46 Անդ, 22 սեպտեմբերի 2001 թ.:
47 Անդ, 25 ապրիլի 1995 թ.:
48 Անդ, 11 հունիսի 1998 թ.:
49 Անդ, 30 մայիսի 2000 թ.:
50 «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 27(60), 10 նոյեմբերի 1998 թ., էջ 20:

կապես ռուսերենի նկատմամբ: Հիմնականում հենց այդ լեզուն էր հնարավորություն տալիս առնչվելու մարդկային քաղաքակրթության նվաճումներին, համաշխարհային մշակույթի գանձերին, ցանկացած բնագավառում խորանալու ընտրած մասնագիտության մեջ եւ այլն: Մի խոսքով վաղուց արդեն ռուսական աշխարհայացքի, լեզվամտածողության հետ սերտ առնչությունների վերականգնման անհրաժեշտությունը օբյեկտիվորեն դարձել էր Հայաստանյան հասարակության, եթե կարելի է ասել, կենսական պահանջմունքներից մեկը: Այդ իմաստով մեր կարծիքով, չափազանց սպասված եւ հույժ կարեւոր էր Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունների կողմից 1997 թ. հուլիսին Երեւանում ստորագրված ռուսաստանյան հեռուստահաղորդակցման կազմակերպությունների ծրագրերը Հայաստանի տարածքում ընդունելու կարգի եւ պայմանների մասին համաձայնագիրը[51], որով Ռուսաստանի հեռուստատեսության հիմնական ծրագրերը արդեն միայն ձեւով կրկին մուտք գործեցին յուրաքանչյուր հայ ընտանիք: Հանուն արդարության հարկ է նշել, որ տակավին 1995 թվականից Հայաստանում համանման ֆունկցիա էր իրականացնում ԱՊՀ տարածքում գործող համագործակցության «Միր» միջպետական հեռուստառադիոընկերությունը[52]:

Երկու երկրների միջեւ գիտամշակութային կապերի ամրապնդման վառ դրսեւորում էր ՀՀ կառավարության որոշմամբ Երեւանում 1998 թվականին ռուս-հայկական համալսարանի հիմնադրումը[53] եւ այլն: Հայ-ռուսական ամենասերտ փոխհարաբերությունների առումով չափազանց խորհրդանշական էր 2000 թվականի սեպտեմբերին ՀՀ եւ ՌԴ կառավարությունների միջեւ ստորագրված երկու երկրների քաղաքացիների անայցագիր փոխադարձ այցելությունների մասին համաձայնագիրը[54], որը նշանակում էր, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ պահպանվում էր քաղաքացիների մինչ այդ երկու երկրների միջեւ գոյություն ունեցած անայցագիր ազատ տեղաշարժի ռեժիմը:

Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական համագործակցության նախնական քայլերն արդեն ներկայացրել ենք նախորդ շարադրանքում ՀՀ եւ ՌԴ միջեւ կնքված միջպետական առաջին պայմանագրերին անդրադառնալիս: Այժմ նշենք, որ հետագայում գնալով ինչպես հարաբերությունների մյուս բնագավառները, այնպես էլ հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները ավելի խորացան եւ դարձան իրոք դաշնակցային բնույթի: Այդ գործընթացում անշուշտ որոշակի քայլ էր 1994 թվականին Մոսկվայում կնքված երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական համագործակցության համաձայնագիրը[55]: Հարկ է նշել, որ երկու երկրների տնտեսական փոխհարաբերությունները կարգավորող նման բնույթի համաձայնագրերը հիմնականում կայացվում էին հայ-ռուսական առեւտրատնտեսական համագործակցության ձեւավորման սկզբնական շրջանում եւ էական դեր էին կատարում այդ գործում: Կոնկրետ 1994 թվականի համաձայնագիրը կոչված էր ավելի խթանելու երկու երկրների տնտեսական բնագավառները ղեկավարող նախարարությունների ու գերատեսչությունների միջեւ երկկողմ երկարաժամկետ պայմանագրերի կնքումը, երկու երկրների

51 Անդ, N 19, 22 օգոստոսի 1997 թ., էջ 3:
52 «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», N 7(1097), 15 նոյեմբերի 1995 թ., էջ 51:
53 «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 28, 15 դեկտեմբերի 1997 թ., էջ 19:
54 «Հայաստանի Հանրապետություն», 26 սեպտեմբերի 2000 թ.:
55 Անդ, 17 փետրվարի 1994 թ.:

տնտեսական հետագա կոոպերացումը, տեխնոլոգիապես փոխշաղկապված արտադրությունների պահպանումն ու զարգացումը: Համաձայնագրի կարեւոր դրույթներից մեկն էլ պարտավորեցնում էր երկու երկրների կառավարություններին լայնորեն աջակցել համատեղ ձեռնարկությունների, միջպետական ընկերությունների ստեղծմանը:

Տնտեսական համագործակցության բնագավառում կարեւորագույն ձեռքբերումների շարքում անշուշտ անհրաժեշտ է արձանագրել նաեւ 1995 թվականին հայ-ռուսական միացյալ առեւտրաարդյունաբերական պալատի ստեղծումը: Այդ նոր կառույցը Հայաստանին նախ եւ առաջ հնարավորություն ընձեռեց ստանալու համաշխարհային մասշտաբով անհրաժեշտ տնտեսական տեղեկատվություն, ինչպես նաեւ համատեղ պալատի միջոցով, օպերատիվ ձեւով, պայմանագրեր կնքել ինչպես ՌԴ տնտեսական սուբյեկտների, այնպես էլ ԱՊՀ անդամ մյուս երկրների հետ[56]: Միացյալ առեւտրաարդյունաբերական պալատը երկու երկրների տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի եւ համատեղ առեւտրատնտեսական փոխգործունեությունը կազմակերպող ու կարգավորող մի շարք այլ հայ-ռուսական միասնական պետական եւ հասարակական հաստատությունների հետ չափազանց մեծ ծավալի գործունեություն էին իրականացնում Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ ըստ էության, հաջողությամբ սկսված տնտեսական ինտեգրումը խորացնելու ուղղությամբ[57]:

Առեւտրատնտեսական հարաբերությունների ծավալման բարձր դինամիկայի խոսուն ապացույցները բավականին շատ են: Բերենք ամենահատկանշականներից եւս մեկը: Այսպես 1997թ. հուլիսին ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանի Մոսկվա կատարած այցի ընթացքում կնքվեցին միայն տնտեսական բնույթի 4 խոշորամասշտաբ պայմանագրեր եւ համաձայնագրեր[58]: Իսկ 2001թ. սեպտեմբերին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինի գլխավորած պատվիրակության Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում երկու երկրների միջեւ ստորագրվեցին տնտեսական համագործակցության բնագավառին վերաբերող յոթ փաստաթուղթ: Այդ թվում՝ մինչեւ 2010 թվականը տնտեսական գործակցության պայմանագիր, ՀՀ մարզային վարչակազմերի եւ ՌԴ սուբյեկտների վարչակազմերի միջեւ համագործակցության, զբոսաշրջության, ներդրումների փոխադարձ պաշտպանության եւ խրախուսման եւ այլ համաձայնագրեր: ՌԴ նախագահի Երեւան կատարած այդ այցի ընթացքում գործնական պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտներում հայ-ռուսական համատեղ ձեռնարկություններ ստեղծելու վերաբերյալ[59]:

Գործընկերային եւ փոխշահավետ տնտեսական համագործակցությունը հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո անցած 10 տարիների ընթացքում խարսխված էր 40-ից ավելի միջպետական պայմանագրերի վրա[60]: Այդ համաձայնությունների գործունեության արդյունքում Հայաստանի արտաքին քաղաքականության ոլորտում Ռուսաստանը ձեռք բերեց առաջնային նշանակություն: Ապահովվեց ՌԴ

56 «Հայաստանի Հանրապետություն», 8 սեպտեմբերի 1995 թ.:

57 Անդ, 12 հուլիսի 1997 թ.:

58 Անդ, 2 հուլիսի, 1997 թ.:

59 «Հայաստանի Հանրապետություն», 18 սեպտեմբերի 2001 թ.:

60 **Ս.Մելքումյան**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երեւան, 2002, էջ 260:

ներշնչող եւ մնայուն ներկայությունը Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Երկու երկրների տնտեսական փոխշահավետ ինտեգրման փայլուն օրինակ դարձավ 1997թ. հունվարին Հայաստանի կառավարության եւ ռուսական «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության միջեւ ստորագրված համաձայնագրով «Հայգազարդ» պետական ձեռնարկության եւ «Գազպրոմ» ՓԲԸ մասնակցությամբ Հայաստանում համատեղ բաժնետիրական ընկերության ստեղծումը: 1997 թվականի դեկտեմբերից արդեն Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես իր գործունեությունը սկսեց ՀՀ կառավարության, «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության եւ «Իտերա» միջազգային էներգետիկ կորպորացիայի մասնակցությամբ ձեւավորված «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը[61]: Ընկերության ստեղծման հիմնական նպատակն էր տարածաշրջանային եւ ներքին էներգետիկ շուկաներում համատեղ տնտեսական գործունեության ձեւավորումը: Բուն Հայաստանում ընկերությունը լայն գործունեություն ծավալեց նոր ստեղծված գազատարների եւ բնական գազի պահեստարանների նախագծման, ֆինանսավորման, կառուցման եւ գործարկման հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ, ինչպես նաեւ Հայաստանում արդեն գործող գազատար համակարգի ընդլայնման, վերակառուցման եւ շահագործման ուղղությամբ[62]: Արդեն 2001 թվականին հանրապետությունում լիովին գազաֆիկացված էին 38 քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ եւ 224 գյուղեր, որոնցում փողոցային գազային ցանցի ընդհանուր ձգվածությունը հասնում էր շուրջ 9200 կմ-ի[63]:

Փաստորեն վստահաբար կարելի է արձանագրել, որ էներգակիրներով աղքատ Հայաստանը հանձին «Գազպրոմի» գտավ իր հուսալի գործընկերոջը, որի շնորհիվ, ինչպես վկայեց պայմանագրի կնքմանը հաջորդած ժամանակաշրջանը, Հայաստանը ունեցավ կայուն էներգետիկ համակարգ, ինչն էլ իր հերթին անհրաժեշտ նախապայման էր հանրապետության ողջ տնտեսության հետագա զարգացման համար: 2001 թվականի տվյալներով Հայաստանի տնտեսության համար այդ հիրավի կենարար վառելիքի ներմուծումը օրական կազմում էր 5,2 մլն մ[64]: Ռուսական գազի մատակարարումը իհարկե, ինչպես ասում են ոչ լավ կյանքից երկու երկրների առեւտրատնտեսական փոխգործունեության ոլորտ ներմուծեց, մինչ այդ, հայ-ռուսական հարաբերություններում երբեւէ չարձանագրված փոխհարաբերության նոր եղանակ: Բանն այն է, որ 2001 թ. վերջերին Ռուսաստանից գազի ներմուծման դիմաց Հայաստանի վճարումների արդյունքում կուտակվել էր հսկայական պարտք: Նման պարագայում հայ-ռուսական տնտեսական բնակցությունների արդյունքում ձեռք էր բերվել պայմանավորվածություն, ըստ որի ՀՀ պարտքը մարելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության որոշ ձեռնարկությունների բաժնետոմսերի մի մասը պետք է տրամադրվեին ռուսական կողմին: 2001 թվականին կայացված այդ համաձայնությամբ հիշյալ եղանակով նախատեսվում էր շահագործել Երեւանի «Մարս», «Էլեկտրոն» ձեռնարկությունները, խոշոր մեքենաշինական համալիրները, Հրազդանի ՋԷԿ-ը եւ

61 «Հայաստանի Հանրապետություն», 21 հունվարի 1997 թ.:

62 «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 24 (57), 1 հոկտեմբերի 1998 թ., Հայաստանի Հանրապետություն, 20 դեկտեմբերի 1997 թ.:

63 «ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Եր., 2002, էջ 179:

64 **Ս. Մելքումյան,** Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երեւան, 2002 թ., էջ 260:

այլ ձեռնարկություններ[65]: «Հայռուսգազարդից» հետո Հայաստանում հաջորդ հայ-ռուսական համատեղ ձեռնարկությունը «Արմենալ» ՓԲԸ-ն էր, որը ձևավորվեց 2000 թվականի ամռանը Երևանի «ԿանԱԶ» և ռուսական «Սիբիրյան ալյումին» միավորված ԲԲԸ-ի միջև կնքված համաձայնագրով[66]: Ձեռնարկության հիմնադրումով ավելի քան 500 մարդ ապահովվեց աշխատանքով, բացի այդ այդ բաժնետոմսերի 26%-ին փիրապետող Հայաստանի բյուջեն սկսեց զգալի համալրում ստանալ գործարանի տարեկան 120 մլն դոլարի արտադրանքի իրացման շահույթից: Ռուսական կողմը մինչև 2005 թվականը պարտավորվել էր գործարանում ներդնել ևս 25 մլն դոլար, որը զգալիորեն կավելացներ մեծ պահանջարկ վայելող արտադրանքի ծավալները: Ինչ վերաբերում է ներդրումներին, ապա Ռուսաստանը առաջատար տեղ էր զբաղեցնում Հայաստանի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրողների թվում: Այսպես 1998 թվականի 9 ամիսների ընթացքում օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում կազմել էին 143 մլն ԱՄՆ դոլար[67], որից Ռուսաստանի բաժինը կազմել էր մոտ 27 մլն դոլար: Հետագայում Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտներում Ռուսաստանի ուղղակի կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը օտարերկրյա ընդհանուր ներդրումների հաշվեկշռում գնալով ավելանում էր: Այսպես՝ 1999 թ. այն կազմել էր արտասահմանյան բոլոր երկրներից կատարված ներդրումների 32,5%-ը, իսկ 2001 թվականին արդեն շուրջ 62%-ը, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ի ներդրումները Հայաստանում կազմել էին ընդամենը 3%[68]:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 1998-2000 թվականներին ընկած ժամանակահատվածում հանրապետությունում հիմնականում 10 երկրների կողմից կատարվել է 550 մլն դոլարի ներդրում[69], որոնց մեջ համեմատական առումով ամենամեծը Ռուսաստանի բաժինն էր: Ընդհանուր առմամբ Հայաստանի անկախացումից հետո մինչև 2001 թիվը ներառյալ Ռուսաստանի միայն ուղղակի ներդրումները հանրապետության տնտեսության մեջ կազմել են ավելի քան 185 մլն դոլար[70], այն դեպքում, երբ օտարերկրյա ուղղակի ներդրումների գումարային ծավալը չի անցել 580 մլն դոլարից[71]:

Այստեղ ամենևին պետք չէ փնտրել որևէ քաղաքական ենթատեքստ կամ էլ տնտեսականից կտրված այլ բան: Նման իրողությունը պարզապես ավելորդ անգամ ապացուցում է այն օբյեկտիվ ճշմարտությունը, որ Ռուսաստանն ու Հայաստանը, որպես տարածաշրջանային հարևաններ տնտեսական առումով միմյանց նկատմամբ ունեն կյանքով թելադրված որոշակի հետաքրքրություններ: Երկու երկրների տնտեսական մերձությունը ևս գերազանցապես բացատրվում էր նաև նախորդ շրջանում՝ հատկապես խորհրդային ժամանակներում ձևավորված միասնական տնտեսական համակարգի պայմաններում փոխներթափանցված տնտեսությունների գոյության փաստով: Հիմնականում հենց վերոհիշյալ հանգամանքների թելադրանքով Հայաստանի համար առաջին գործընկերը առևտրատն-

65 Անդ, էջ 260:

66 «Հայաստանի Հանրապետություն», 22 հուլիսի 2000 թ.:

67 Անդ, 26 մարտի 1999 թ.:

68 **Ս. Մելքումյան**, անդ, էջ 258:

69 «Հայաստանի Հանրապետություն», 18 նոյեմբերի 2000 թ.:

70 **Ս. Մելքումյան**, անդ, էջ 257:

71 Մարդկային զարգացման ազգային զեկույց 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 88:

պեսական հարաբերություններում բացարձակ ցուցանիշների առումով հանդիսացել է Ռուսաստանի Դաշնությունը: Այսպես՝ 1998 թ. Ռուսաստանը ՀՀ-ի հետ առևտրապնտեսական հարաբերություններում առաջատարի իր դիրքերը պահպանել է մոտ 231 մլն 390 հազար դոլարի արտադրանք շրջանառությամբ, իսկ 2000 թվականին կրկին լինելով առաջատարը Հայաստանի հետ իրականացրել է մոտ 182 մլն դոլարի ապրանքաշրջանառություն[72]: Ռուսաստանը Հայաստանի հետ առևտրաշրջանառության բնագավառում, շուրջ 164 մլն դոլար ցուցանիշով, առաջինն էր նաև 2001 թվականին[733]: Հարկ է նշել, որ մշտապես զգալիորեն գերակշռել է Ռուսաստանից Հայաստան արտահանումը: Այսպես, օրինակ՝ դրամական առումով 1999 թ. Ռուսաստանից դեպի Հայաստան իրականացված ապրանքների արտահանումը շուրջ 5 անգամ գերազանցել է ՀՀ-ից ներմուծման ծավալները: Հայաստանի համար ԱՊՀ երկրների միջև Ռուսաստանը եղել է հիմնական արտահանման երկիրը: Այսպես 1995-1999 թթ. փվլայլներով Հայաստանից դեպի համագործակցության անդամ երկրներ արտահանված արտադրանքի կեսից ավելին ուղղվել է դեպի Ռուսաստանի Դաշնություն[74]:

72 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (1999. 2000), Երևան, 2001թ., էջ 467:

73 **Ա. Մարկոսյան**, **Դ. Հախվերդյան**, **Գ. Նազարյան**, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002, էջ 124:

74 **Մ. Մելքումյան**, անդ, էջ 214: